ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

24 հուլիս, 2015թ. ք. Երևան

«Դատաիրավական բարեփոխումների հակակոռուպցիոն ասպեկտները» հակակոռուպցիոն միջոցառման

2015 թվականի հուլիսի 24-ին Վանաձորում կայացավ հակակոռուպցիոն միջոցառում «Դատաիրավական բարեփոխումների հակակոռուպցիոն ասպեկտները» թեմայով՝ Լոռու մարզի ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների մասնակցությամբ:

Այն կազմակերպվել էր ՀԵԻԱ-ի կողմից՝ Եվրոպական Միության և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի համաֆինանսավորմամբ իրականացվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում:

«Դատաիրավական համակարգը ամենակարևոր համակարգերից է և նախադրյալներից, եթե մենք ուզում ենք կոռուպցիայից ազատ երկիր ունենալ: Իմ համոզմամբ՝ եթե քաղաքացին իր տարբական իրավունքները չկարողանա դատարանում պաշտպանել, մենք չենք կարողանա խոսել կոռուպցիայի դեմ պայքարի մասին»,- ասաց ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հակակոռուպցիոն ծրագրերի համակարգող Նաիրա Գյուլնազարյանը:

«Ցավոք ներկայումս կառավարության նախաձեռնությամբ ստեղծված կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը չի համապատասխանում այն պատկերացումներին, որ ունի հակակոռուպցիոն կոալիցիան՝ առաջին հերթին իր անկախության և արդյունավետության հետ կապված: Այդ իսկ պատճառով կոալիցիան չմասնակցեց ու խորհուրդ տվեց քաղաքացիական հասարակության կազմակերպություններին չմասնակցել աշխատանքներին, ուստի որևէ ՀԿ հայտ չներկայացրեց խորհրդի կազմում աշխատելու համար»,- նշեց ՀԵԻԱ նախագահ, «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի ղեկավար Կարեն Զադոյանը:

Հասարակական հակակոռուպցիոն վերահսկողությունը դատաիրավական բարեփոխումների ոլորտում ներկայացրեց «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի տեղական փորձագետ Մարատ Ատովմյանը:

Դատաիրավական բարեփոխումների մարզային մակարդակի դիտորդմանը ուղղված Հակակոռուպցիոն կոալիցիայի գործունեությանն անդրադարձ կատարեց «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի ռեգիոնալ համակարգող/փորձագետ Արթուր Սուքիասյանը:

Ծրագրի հիմնական նպատակն է մեծացնել ՔՀԿ-ների դերը հակակոռուպցիոն բարեփոխումների խթանման և իրականացման գործում: Ծրագրի շրջանակներում կիզորացվեն ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների մոնիթորինգի և վերահսկողության կարողությունները: Կկազմակերպվեն հակակոռուպցիոն դասընթացներ ՀՀ մարզերում ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների համար՝ կոռուպցիոն բնույթի և տեղեկատվության ազատության խնդիրներն առավել լավ ըմբռնելու համար: Այս միջոցառումների նպատակը հակակոռուպցիոն գործողությունների իրականացման առկա հնարավորությունների խորացումն է: Հանրային վերահսկողության արդյունավետության բարձրացման և համապատասխան մոնիթորինգային, վերահսկողական և հետաքննական ծրագրերի իրականացման նպատակով կտրամադրվեն փոքր դրամաշնորհներ: Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մեխանիզմների ամրապնդման համար ՔՀԿ-ների մասնակցությամբ կմշակվի ՔՀԿ-կառավարություն կայուն երկխոսություն:

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ՝ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի կողմից (իրականացնող)՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ (գործընկեր): Ծրագրի տևողությունը 3 տարի է (2014 թվականի հունվարից 2016 թվականի դեկտեմբեր): Ծրագրի բյուջեն կազմում է 650.000 եվրո, որից ԵՄ ներդրումը կազմել է 585.000 եվրո, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ներդրումը՝ 15.600 եվրո:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան (ՀԵԻԱ) ստեղծվել է 1995թ.-ին: ՀԵԻԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա
Հասցե Նալբանդյան 7, բն. 2 Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս: +37410 54 01 99
Հեռապատճեն: +37410 58 02 99

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
Հասցե Բուզանդի 1/3
Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս: +37410 56 03 60
Հեռատճեն: +37410 56 03 60

Ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն
Հեռախոս +37410 54 64 94
Հեռապատճեն +37410 54 64 95

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է: Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նու-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ:

Ծրագիրը համաֆինանսավորվում է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից
Հեռախոս +374 10 229610
Հեռապատճեն +374 10 229615

ԵԱՀԿ երևանյան գրասենյակը գործում է 1999թ.ից, որի առաքելությունն է աջակցել Հայաստանին զարգացնելու իր ժողովրդավարական հաստատությունները և ամրապնդելու քաղաքացիական հասարակությունը՝ գործելով օրենսդրական բարեփոխումների, կոռուպցիայի և թրաֆիքինգի դեմ պայքարի, բնապահպանական, մարդու իրավունքների իրազեկման բարձրացման, լրատվամիջոցների ազատության և այլ ոլորտներում: